Պետական նպաստները 2016 թվականին նշանակվել և վճարվել են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն) սահմանված դրույթներին համապատասխան՝ որպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-231-Ն) 8-րդ հոդվածով նախատեսված սոցիալական ծառայությունների առանձին ձև: Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն) նշանակման և վճարման գործընթացը 2016 թվականին իրականացրել են սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները կամ բաժինները (այսուհետ՝ ՍՍՍՄ), որոնք պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի առանձնացված ստորաբաժանում են:

Պետական նպաստների համակարգը՝ որպես ծայրահեղ աղքատության հաղթահարման գործիք, կարիք ունի վերափոխման՝ ընդհանուր աղքատության կրճատման խնդիրների լուծման և կայուն ընտանիքների ձևավորմանն օժանդակելու համար: Սոցիալական քաղաքականությունն ուղղված է սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերից բնակչության արտագաղթի կանխմանը, այդ բնակավայրերի բնակչության սոցիալական

ակտիվության բարձրացմանը, որը կհանգեցնի սոցիալական անտարբերության նվազմանը:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ.

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (նախկինում ընտանեկան նպաստ) ծրագիրը կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին, ունի սոցիալական բարձր հնչեղություն:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր, և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 4 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը հիմնվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների վրա, վարչարարության բարելավում, տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

Ընտանեկան նպաստի համակարգում իրականացված բարեփոխումներն իրականացվել են ԱՀՌԾ և ԿԶԾ սահմանած ռազմավարական ուղղություններին, ՀՀ ԱՎԾ ամենամյա տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների տվյալներին համապատասխան՝ փոփոխելով ընտանիքների անապահովության գնահատման կարգը:

Ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով, որը որոշվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ հաստատված ընտանիքների անապահովության գնահատման կարգով: Համաձայն այդ կարգի ընտանիքի (տնային տնտեսության) անապահովության աստիճանը գնահատելու նպատակով հաշվի են առնվում աղքատությունը բնութագրող անուղղակի ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլն:

Վերոհիշյալ յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով որոշվում է ընտանիքի անապահովության միավորը: Որքան մեծ է այդ միավորը, այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը:

2008 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվեց «30.00», նախորդ տարվա «33.00» անապահովության միավորի դիմաց: Այս մեծությունը պահպանվել է նույնությամբ մինչև 2016 թվականը ներառյալ:

Ընտանեկան նպաստների բնագավառում հիմնական փոփոխությունները կատարվել են 2012 թվականին՝ ընտանիքի միջին ամսական եկամտի կառուցվածքում և եկամտի գործակցի հաշվարկման բանաձևում:

2012 թվականի հունվարից ընտանիքի միջին ամսական ամբողջական եկամտի կազմում հաշվի են առնվում նաև զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող ամենամյա դրամական օգնությունները, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ինչպես նաև զոհված՝ Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքի նպաստները: ՀՀ կառավարության որոշմամբ ընտանիքի անապահովության գնահատման բանաձևում եկամտի գործակցի ազդեցությունը մեղմացվել է, որով չեզոքացվել է ընտանիքի միջին ամսական «մեծացած եկամտի» ազդեցությունը:

Այս փոփոխությունների արդյունքում ցածր աշխատավարձ ունեցող ընտանիքները նույնպես ձեռք են բերում ընտանեկան նպաստի իրավունք՝ առավելապես երեխա ունեցող ընտանիքները:

Սա համահունչ է նախորդ տարիների ընթացքում գրանցված ինֆլյացիային և աղքատության մակարդակի բարձրացմանը: Միաժամանակ միջոցառումն ունի հակակոռուպցիոն բնույթ: Հաշվի առնելով նախորդ տարիների ընթացքում համակարգում աշխատելու փաստը կամ ստացած աշխատավարձի չափը թաքցնող անձանց առկայությունը, որոնք հայտնաբերվում են նախարարության կողմից կատարած տարբեր տեղեկատվական բազաների համադրման միջոցով՝ այս քայլը հնարավորություն է տալիս ցածր աշխատավարձ ունեցող աղքատ ընտանիքներին ընդգրկվել համակարգում՝ առանց դիմելու զարտուղի ճանապարհների:

Պետական նպաստների նշանակման և վճարման գործընթացի վարչարարության բարելավմանն ուղղված փոփոխությունները վերաբերում են նախ և առաջ այն հանգամանքին, որ ավելացել են այն տվյալների թիվը, որոնք որևէ պետական նպաստի իրավունքի իրացման համար ընդունվում են դիմողի հայտարարությամբ, իսկ դրանց հավաստիությունը ստուգվում է առցանց եղանակով ձեռք բերված տվյալով:

Մասնավորապես, հարկ է նշել, որ առցանց եղանակով տվյալներ են ստացվում ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանումներից (բնակչության կամ ընտանիքի կազմի մասին տվյալը), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (ընտանիքի ունեցած հողատարածքի մակերեսի, տեսակի և դրա կադաստրային գուտ եկամտի մասին տվյալները): Նշված երկու տվյալն օգտագործվում է անմիջականորեն ՍՍՏՄ-ների կողմից՝ իրենց առցանց հարցմանը տրված պատասխանի ձևով: Առցանց են ստացվում նաև տվյալներ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից, ՀՀ ԿԱ ոստիկանության ՀՀ ճանապարհային ոստիկանությունից, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություններից՝ ամսական պարբերականությամբ «Նորք» ՄՕՏԻԿ հիմնադրամի կողմից, ուր իրականացվում են տարբեր տեղեկատվական բազաների տվյալների կենտրոնացված համադրումներ. դրանց արդյունքներով ձևավորված ցուցակները տրամադրվում են ՍՍՏՄ-ներին, որոնք աշխատում են այդ ընտանիքների հետ՝ կրկին ուսումնասիրում նրանց սոցիալ-տնտեսական պայմաններն ու առաջարկություն ներկայացնում ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքի կապակցությամբ:

Այս ուղղությամբ արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

Աղյուսակ 1. Ընտանեկան (կամ սոցիալական) նպաստը ՀՀ-ում 2012-2016թթ.

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	15.9	16.5	17.2	17.4	17.41
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	77.69	79.78	77.71	77.57	80.8
Նպաստառու ընտանիքներ	12.36	13.16	13.37	13.53	14

(% ՀՀ ընտանիքների թվից)					
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	80.69	76.97	76.27	76.91	75.5
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	37.105	37.105	37.105	38.361	38.361
Նպաստառու ընտանիքների թիվ	96 309	102 570	104 130	105 408	106 296
Նպաստի միջին չափ (դրամ)	29 350	29 350	30 350	30 350	31 350

2016թ.- ին նույնպես շարունակվել է նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը՝ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր:

Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

Սոցիալական, ընտանեկան նպաստների ինչպես նաև եռամսյակային հրատապ օգնության բազային մասը 2016 թվականի համար սահմանվել է 18000 դրամ:

Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի: Այս տիրույթներում հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով՝ որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը:

Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է, սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1000 դրամով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում սահմանվել են միանվագ հրատապ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու, ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեցող չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնության չափը սահմանվել է 50 հազար դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության չափը՝ 25 հազար դրամ, իսկ ընտանիքի անդամի

մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ հրատապ օգնության չափը՝ 50 հազար դրամ: 2016թ. ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ հրատապ օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 5163 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 11378 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 147 ընտանիքի:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՄՍՏՍ-ն սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ կարող է սովյալ ընտանիքին նշանակել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Հրատապ օգնության չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար: 2016թ. հրատապ օգնություն են ստացել միջինում 5412 ընտանիք:

Միաժամանակ կարևորվում է սոցիալական ծառայությունները փաթեթով տրամադրելու խնդիրը: **Ինտեգրված սոցիալական ծառայությունների** տրամադրումը միջոց է սոցիալական ծառայությունների որակը, մատչելիությունը բարձրացնելու, դեպի հաճախորդները կողմնորոշելու, դրանց գնահատման և մշտադիտարկման, ինչպես նաև ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նշված համակարգին անցնելու գործընթացը բավականին երկարատև է, այն պետք է իրականացվի աստիճանաբար և առնչվում է կառավարման ոլորտի տարբեր ճյուղերի: Համակարգի ներդրման համար իրականացվում է իրավաստեղծ ծավալուն աշխատանք, հստակեցվում են յուրաքանչյուր օղակի լիազորությունների շրջանակները, ինչպես նաև համատեղ աշխատանքի եզրերը, մշակվում են մեխանիզմները, դրանց նորմացույցերը և այլն:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման նպատակով 2012 թվականի հուլիսի 26-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 952-Ն որոշումը, որով հաստատվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի (այսուհետ՝ համակարգ) ներդրման ծրագիրը, նախատեսվել և ՀՀ Արարատի մարզում իրականացվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիր:

Համակարգի ներդրումը ենթադրում է հանրապետությունում ձևավորել համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՄՕՏԿ), որոնցում տեղակայվելու են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության սոցիալական ապահովության ապահովության բաժինները, զբաղվածության տարածքային (մարզային) կենտրոնները, բժշկասոցիալական փորձաքաննական հանձնաժողովները, ՀՀ մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները:

2013թ. արդեն սկսել են գործել թվով 19 ՀՄՕՏԿ-ներ (Արարատի, Արտաշատի, Վեդու, Մասիսի, Աշոցքի, Մարալիկի, Չարենցավանի, Եղվարդի, Բաղրամյանի, Արմավիրի, Վարդենիսի, Ճամբարակի, Նոյեմբերյանի, Աջափնյակի, Նուբարաշենի, Դավթաշենի, Նորք-Մարաշի, Ավանի, Էրեբունու):

Նշված գործընթացը շարունակելու նպատակով առաջիկայում ՀՀ կառավարության որոշումներով կամ համապատասխան համայնքների ղեկավարների հետ անշարժ գույքի օգտագործման անհատույց անժամկետ պայմանագրեր կնքելու միջոցով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կհատկացվեն նաև շենքեր, շինություններ՝

հանրապետության այլ տարածքներում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ տեղակայելու համար:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ուղղությամբ 2016 թվականին իրականացվել են գիտելիքահեն գործընթացի ներդրման և սոցիալական ծառայությունների տրամադրող նոր տարածքային կենտրոնների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Սոցիալական աշխատողների համընդհանուր վերապատրաստում և համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող նոր տարածքային կենտրոնների գործարկման պայմանների ստեղծում.

• Սոցիալական համագործակցության ինստիտուցիոնալիզացիայի նպատակով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, ՏԻՄ-երի և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջև համագործակցության մեխանիզմներին վերաբերող հանդիպումների, կլոր սեղանների, սեմինարների, ուսուցման դասընթացների կազմակերպում

2016թ. ապրիլ և մայիս ամիսների ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան մասնագետները այցելություններ են կատարել ՀՀ մարզեր՝ տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի կնքման և դրա շրջանակում համակարգող խորհրդի ձևավորման աշխատանքներին մեթոդական աջակցություն տրամադրելու նպատակով, հիմք ընդունելով՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի «Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի օրինակելի ձևը, տարածքային մակարդակում սոցիալական համաձայնագրի ընդունման ընթացակարգը, տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի օրինակելի աշխատակարգը սահմանելու, ՀՀ սոցիալական ապահովության նախարարի 2000 թվականի հուլիսի 31-ի N 36-Պ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 18-ի N 153-Ն հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ն հրամանը (ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվել է 11.03.2016թ., N 11516078):

Տարածքային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրին միանալու, ինչպես նաև համակարգող խորհրդի ձևավորման աշխատանքների շրջանակներում համապատասխան հայտարարություններ են տեղադրվել ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) պաշտոնական կայք էջերում: Համաձայնագրերի կնքման աշխատանքներն ընթացքի մեջ են:

«Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության համագործակցությամբ նախաձեռնվել է պատժից ազատված անձանց վերաինտեգրման և ուղղորդման կարգի նախագծի մշակում, և այդ կապակցությամբ, միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում, 2016թ. մարտի 31-ից ապրիլի 2-ը Ադվերանում կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ՝ քրեակատարողական հիմնարկների, իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոնի սոցիալական աշխատողների և ինտեգրված սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների ղեկավարողների մասնակցությամբ:

2016թ. մայիսի 13-ին մեկնարկել է միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ազգային մակարդակում սոցիալական

համագործակցության համաձայնագրի կնքման գործընթացը, որը ենթադրում է սոցիալական կարիքների բացահայտման, ռիսկերի կանխարգելման, դեպքի վարման արդյունավետության բարձրացման, սոցիալական աջակցության տրամադրման հասցեականության բարձրացման նպատակով սոցիալական ոլորտի տեղեկատվության փոխանակման և գործողությունների իրականացման միասնական ցանցի ձևավորում: Համաձայնագրին միանալու գործընթացը բաց է համագործակցության պատրաստ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար:

2016թ. մայիս ամսից ազգային մակարդակով սոցիալական համագործակցության համաձայնագրին միացել է շուրջ 46 կազմակերպություն և ֆիզիկական անձ:

Համաձայնագրերի կնքման աշխատանքները պարբերական են:

• **«Սոցիալական աշխատանք» մասնագիտացման կամ որակավորման բարձրացման դասընթացների ծրագրերի մշակում, կազմակերպում**

Սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող աշխատողների մոտ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ձևավորման և զարգացման նպատակով ընդունվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. մայիսի 2-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով ուսուցման, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում աշխատողների համակարգչային ծրագրերով աշխատանքի լրացուցիչ թեմաները, պահանջները հաստատելու և նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու մասին» N 51-Ս/1 հրամանը: Մշակված ուսումնական ծրագրի հիման վրա իրականացվող վերապատրաստման արդյունքում սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների աշխատողներին հավաստագրերի տրամադրման նպատակով ընդունվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. հունիսի 8-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում աշխատողների համակարգչային ծրագրերի գիտելիքների հավաստագրման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 63-Ս/1 հրամանը:

Մշակվել է սոցիալական աշխատանք մասնագիտացման, ինչպես նաև սոցիալական աշխատողների որակավորման բարձրացման դասընթացների ծրագրերը, որով սահմանվել են սոցիալական աշխատողների համար նախատեսվող որակավորման դասընթացների թեմաներն, ինչպես նաև ժամաքանակներն՝ ըստ վերապատրաստվողների խմբերի:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. օգոստոսի 24-ի N 91-Ս/1 հրամանով հաստատվել է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացների կազմակերպման ընթացակարգը և դրանց ծրագրերը: Դասընթացները կազմակերպվել են 2016թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ընթացքում և սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) շուրջ 430 աշխատողներ ուսուցանվել և ստացել են համապատասխան վկայականներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. սեպտեմբերի 26-ի N 97-Ս/1 հրամանով հաստատվել է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների տարածքային մարմիններում սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում հավաստագրման ենթակա աշխատողների կողմից կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման 2016թ. դասընթացների ժամանակացույցը, ըստ որի սոցիալական աջակցության

տարածքային գործակալությունների (բաժինների) շուրջ 500 աշխատողներ անցել են ուսուցում և ստացել հավաստագրեր:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ «Դեպք վարողների կարողությունների զարգացմանն ուղղված» և «Խնամատար ընտանիք» ծրագրերի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում՝ 2016թ. հուլիսի 18-22-ը, ՀՀ Արմավիրի մարզում՝ սեպտեմբերի 7-13-ն իրականացվել է վերապատրաստման դասընթաց սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) դեպք վարողների համար: Դասընթացի նպատակն էր տեղական մակարդակում գործունեություն ծավալող սոցիալական ոլորտի մասնագետների կարողությունների զարգացման ճանապարհով նպաստել քաղաքականության և ծառայությունների մատուցման մակարդակների ներդաշնակեցմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում իրականացվող «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման մեջ միգրանտների ներգրավվածության բարձրացում. դեպքի վարման բաղադրիչ» ծրագրի վերջին փուլում վերը նշված մարզերի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների (բաժինների) սոցիալական դեպքի վարման աշխատանքներում ընդգրկված թվով 50 դեպք վարողների հետ տեղերում 2016թ. սեպտեմբերի 2-15-ն իրականացվել է երկօրյա սեմինար-դասընթացներ, որը վերաբերում էր «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի մասնագիտական իրազեկմանը և առկա հարցադրումների վերհանմանն ու պարզաբանմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ 2016թ. սեպտեմբերի 7-9-ը Դիլիջանում կազմակերպել է «Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև համագործակցության ինստիտուցիոնալացումը տեղական և տարածքային մակարդակներում» թեմայով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ 2016թ.-ի սեպտեմբերի 16-17-ը Ծաղկաձորում «Աշխատանքային միգրացիայի սոցիալական հետևանքների մեղմացում և տեղական զարգացման մեջ միգրանտների ներգրավվածության բարձրացում. դեպքի վարման բաղադրիչ» ծրագրի շրջանակներում կազմակերպել է «Սոցիալական դեպքի վարման ինստիտուտի կայացման մարտահրավերների նոր լուծումներ» թեմայով սեմինար-քննարկում, որի ընթացքում ներկայացվել է ծրագրի նոր զարգացումները, սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգի լրամշակման սկզբունքները:

• **Սոցիալական աշխատողների ռեգիստրի ձևավորում**

Ձևավորվել է սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) սոցիալական աշխատողների ռեգիստրը: Ներկայումս աշխատանքներ են իրականացվում սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների սոցիալական աշխատողների տվյալներն այդ ռեգիստրում ներառելու համար:

Ձևավորվել է նաև ազգային մակարդակով սոցիալական համագործակցության համաձայնագրի միացած կազմակերպությունների և ֆիզիկական անձանց ռեգիստրը:

• **Համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող ևս 20 տարածքային կենտրոնների գործարկման պայմանների ապահովում**

ՀՀ վարչապետի 2016թ.մարտի 16-ի N 02/24.12/3604-16 հանձնարարականի հիման վրա համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՄՕՏԿ) ձևավորման համար ՏԻՄ-երի կողմից ներկայացվել են անհրաժեշտ տարածքների հատկացման նոր առաջարկություններ (առաջնահերթությունը տալով առավել քիչ ծախսատար կառույցների տարբերակներին): Այդ առաջարկությունները հաշվի առնելով, նոր ՀՄՕՏԿ-ների գործարկումն ապահովելու ուղղությամբ բավարար աշխատանքային պայմանների և միասնական ընդունարանների ստեղծման նպատակով մշակվել և հաստատվել են դրանց կառուցման կամ հիմնանորոգման էսքիզային նախագծերի և նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ (ընդամենը 11 ՀՄՕՏԿ-ի համար): Արդեն իսկ սկսվել են Վանաձորի, Ստեփանավանի, Ամասիայի, Թալինի, Մալաթիա-Մեքաստիայի ՀՄՕՏԿ-ների շինվերանորոգման աշխատանքները: Իսկ Շենգավիթի և Հրազդանի ՀՄՕՏԿ-ների շինվերանորոգման աշխատանքներն սկսելու նպատակով սահմանված կարգով տրվել են մրցույթների հայտարարություններ:

Եվս 10 ՀՄՕՏԿ-ների համար առկա են համապատասխան տարածքի հատկացման վերաբերյալ ՀՀ կառավարության կամ համայնքի ավագանու որոշումները: Ներկայումս ընթանում են գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքները: Այդ ՀՄՕՏԿ-ներից 7-ի համար նախագծային կազմակերպության ընտրության մրցույթը գնահատման փուլում է, իսկ Արթիկի ՀՄՕՏԿ-ի համապատասխան տարածքի գնման գործընթացն ավարտվել է և իրականացվում է գույքի ընդունման-հանձնման գործընթացը:

Նոր ձևավորվող ՀՄՕՏԿ-ների գույքի և տեխնիկական վերազինման նպատակով կատարվել է կարիքների ուսումնասիրություն և ընթացքի մեջ է դրանց ձեռք բերման մրցույթների հայտարարման գործընթացը:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի լիարժեք գործունեության ապահովման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսական մոդելների մշակման համար ընտրված խորհրդատու կազմակերպությունը ներկայացրել է աշխատանքների իրականացման առաջին միջանկյալ հաշվետվությունը, որն ընդունվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացման նպատակով խորհրդատու կազմակերպություն է ընտրվել «ՄԻ Էմ Ջի» ընկերությունը, որը ներկայումս իրականացնում է աշխատանքների կատարման մասին առաջին միջանկյալ հաշվետվության լրամշակման աշխատանքները, հաշվի առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առաջարկությունները՝ կապված լուսաբանող թեմաների, ժանրերի, լսարանների և այլ հայտանիշների կոնկրետացման հետ:

Նոր ՀՄՕՏԿ-ների ստեղծման հետ կապված խնդիրներն ու անելիքները քննարկելու նպատակով 2016թ. մայիսի 6-8-ը կազմակերպվել է սեմինար-խորհրդակցություն՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների ղեկավարների մասնակցությամբ:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման հետ կապված աշխատանքների ու խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել Վանաձորում, Թալինում, Ստեփանավանում, Ախուրյանում, Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանում:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունք ունի ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողը՝ մինչև երեխայի երկու տարեկան դառնալը: 2009 թվականի հունվարի 1-ից մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը կազմում է 18000 դրամ:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող նպաստառուների թիվը և նպաստների վճարմանը հատկացված ֆինանսական միջոցները 2012-2016թթ.

Տարիներ	2013թ.		2014թ.		2015թ.		2016թ.	
	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)	Նպաստառուների միջին ամսական թիվ	Ֆին. միջոցներ (մլրդ. դրամ)
Ընդամենը	11539	3.066	13312	3.072	13063	3.068	13493	2.914

Ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով 2016 թվականին շարունակվել են նախորդ տարի սկսված օրենսդրական փոփոխությունները՝ ուղղված երեխայի ծննդյան կապակցությամբ տրամադրվող պետական աջակցության ձևերի ու ծավալների արդյունավետության բարձրացմանը:

Մասնավորապես, բնագավառը կանոնակարգելու նպատակով 2016 թվականին մշակվել են մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝

1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 16.12.2016թ. թիվ ՀՕ-223-Ն).
2. «ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 75-Ն որոշում,
3. «ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 81-Ն որոշում,
4. «ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 17-ի N 254-Ն որոշում,
5. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ N 966-Ն որոշում,
6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1178-Ն որոշում:

Մայրության նպաստ 2016 թվականից վճարվում է նաև չաշխատող մայրերին: Նպաստի չափը կազմում է 126 600 դրամ:

2016թ. վերանայվել են երեխայի ծննդյան միանվագ վճարի, որպես ընտանեկան դրամագլուխ տրամադրված գումարի, տնօրինման ուղղությունները՝ դրանք ավելի մատչելի դարձնելով հատկապես գյուղական բնակավայրերի բնակիչների համար (կարող են ուղղվել նաև երեխայի ծնողին տրամադրված գյուղատնտեսական վարկի տոկոսագումարը վճարելուն և մայր գումարը մարելուն (եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է պետական ծրագրի շրջանակում), ՀՀ կառավարության սահմանած հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, Գեղարքունիքի մարզի Այգուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի գնման համար):

Պարզեցվել է երեխայի ծննդյան միանվագ, չաշխատող անձի մայրության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ նշանակելու համար դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը. դրանք շահառուի հաշվառման տարածքային բաժին ՈԾ2017 թ. հունվարի 1-ից՝ ցանկացած տարածքային բաժինՈ կարող է ներկայացնել այլ անձ: Ընդ որում՝ 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի դիմումը կարող է ներկայացվել առցանց:

Քննության առնելով ՀՀ քաղաքացիների բարձրացրած հարցը՝ կարգավորվել են ԼՂՀ-ում հաշվառված գործատուի մոտ աշխատող՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստ նշանակելուն և վճարվելուն առնչվող հարաբերությունները. ԼՂՀ-ում խնամք նպաստ չնշանակվելու դեպքում խնամքի նպաստի իրավունքն իրացվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

4. Սոցիալական պաշտպանություն

Հաշմանդամներ և տարեցներ

Հաշմանդամության բնագավառում վարվող քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, նրանց համար հավասար հնարավորությունների և մատչելի պայմանների ապահովմանը, հետևաբար նաև՝ սոցիալական ներառմանը:

2016 թվականին շարունակվել են հաշմանդամության բնագավառի օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանացնելուն ուղղված աշխատանքները:

Լրամշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը 2016թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային Ժողովում ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Ոլորտում առաջիկա տարիների սոցիալական ներառման միասնական, համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով հաստատվել է Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը:

Շարունակվել են աշխատանքները անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման նոր մոդելի ներդրման ուղղությամբ: Մշակված չափորոշիչներն ու գործիքները թույլ կտան անձին գնահատել հնարավորինս օբյեկտիվ, ինչպես նաև անձի կարիքների բազմակողմանի գնահատման հիման վրա մատուցել հասցեական և նպատակային ծառայություններ: 2016թ. հոկտեմբերի 20-21-ին

կազմակերպվել է «Աշխարհն առանց արգելքների» խորագրով միջազգային գիտաժողով, որի ժամանակ ներկայացվել է ԱՀԿ ՖՄԴ միջազգային փորձը, ինչը նույնպես նպաստեց մոդելի ներդրման համար անհրաժեշտ եզրահանգումներ կատարելու և առաջարկություններ ներկայացնելու համար:

2016թ. իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ, սայլակներ, լսողական սարքեր և այլ վերականգնողական պարագաներ: Նախարարությունը հետևողական աշխատանքներ է տարել ինչպես պարագաների տեխնիկական բնութագրերի հստակեցման, այնպես էլ դրանց գների վերահսկման նկատմամբ:

Տեսողությունը կորցրած անձանց համար շարունակվել է հատուկ տառատեսակներով գրքերի և տետրերի տպագրման և «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը:

«Արթմեղձ բժշկական վերականգնողական կենտրոնում բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայություն է ստացել 818 անձ:

Պետական աջակցություն է ցուցաբերվել «ՓրկությունՈՍ, «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպություններին՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և դեռահասներին ցերեկային կենտրոնում սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու նպատակով:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 205.166 անձ, որից 8.118-ը հաշմանդամ երեխա:

Տարեցների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է նպաստել խնամքի կարիք ունեցող տարեց մարդկանց կյանքի որակի բարձրացմանը: 2016 թվականին շարունակվել են աշխատանքները տարեցների սոցիալական պաշտպանության, խնամքի և սոցիալական ծառայությունների բարելավման և նրանց համար արժանապատիվ կենսապայմաններ ու արժանապատիվ ծերություն ապահովելու ուղղությամբ:

2016թ-ի հոկտեմբերի 27-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 1112-Ն որոշումը՝ «Պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների ու սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների ցանկերը և սոցիալական աջակցության վճարովի ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության վճարովի ծառայություններից ձևավորված ֆինանսական միջոցներից սոցիալական աջակցության ֆինանսավորման դեպքերն ու կարգը սահմանելու մասին», որը կնպաստի սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների գործունեության արդյունավետության և պատասխանատվության բարձրացմանը և որով սահմանված են պետության կողմից երաշխավորված՝ պետական մարմինների ենթակայության ներքո գտնվող սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից անվճար տրամադրվող սոցիալական ծառայությունների և սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) հիմունքներով տրամադրվող սոցիալական ծառայությունների ցանկերը, ինչպես նաև սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայությունների տրամադրման, սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից ձևավորված ֆինանսական միջոցներից սոցիալական աջակցության ֆինանսավորման դեպքերն ու կարգը:

Շարունակվել են իրականացվել միջոցառումներ, որոնք նախատեսված են ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ին հավանության արժանացած «Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունը և դրա իրականացման 2012-2017թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 31 արձանագրային որոշմամբ:

«Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակում միայնակ տարեցներին և հաշմանդամներին շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող հինգ տուն-ինտերնատ` Երևանի N 1, Նորքի, Վարդենիսի նյարդահոգեբանական, Գյումրու տուն-ինտերնատները և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնը: Տուն-ինտերնատներում խնամվող 1210 կենսաթոշակառուները գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո:

«Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում» ծրագրով նախատեսված միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ է մատուցում նախարարության համակարգում գործող «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը Երևան քաղաքում սպասարկում է 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառուի:

«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրով «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ին կից ցերեկային կենտրոնում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություն են ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 30 անձ:

«Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի շրջանակում ՀՀ պետական բյուջեից «Հանս Քրիստիան Քոֆոեդ» բարեգործական հիմնադրամին հատկացվում է ֆինանսական միջոցներ` 100 անօթևան անձի ժամանակավոր (մինչև 90 օր ժամանակով) կացարան տրամադրելու և սոցիալական տարբեր ծառայություններ մատուցելու համար:

«ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրով պետական աջակցություն է ցուցաբերվել «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին հանրապետության 8 մարզերում 4200 միայնակ տարեց ու հաշմանդամ կենսաթոշակառուի տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում սպասարկող աշխատողների աշխատավարձը փոխհատուցելու համար:

«Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» ծրագրով Վանաձորի տարեցների տանը խնամվել է 55 կենսաթոշակառու:

Միաժամանակ, տարեցների իրավունքների ու շահերի պաշտպանության նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և գործընկեր շահագրգիռ կազմակերպությունների (Հայկական Կարիտասի, «Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ի, Հայկական Խարմիր Խաչի և այլն) նախաձեռնությամբ հիմնադրված ՀՀ-ում տարեցների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրներով և խնամքի տրամադրմամբ զբաղվող պետական, հասարակական և մասնավոր կառույցների ցանցը շարունակել է իր գործունեությունը` հավաքների ընթացքում վեր հանելով բազմաթիվ խնդրահարույց հարցեր րև անհրաժեշտության և հնարավորության սահմաններում լուծում տվել այդ հարցերի լուծմանը: Ցանցի անդամները ներգրավվել են նաև «Ծերացման հետևանքների հաղթահարման

և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրի»>> մշակման աշխատանքներին:

Երեխաների հիմնահարցերի բնագավառ

2016 թվականին շարունակվել են ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումները: Մասնավորապես տարվա ընթացքում մշակվել և ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

1. «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N 9 արձանագրային որոշումը, ընդունվել է 2016 թվականի մարտի 10-ին,
2. «Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը հաստատալու մասին» ՀՀ կառավարության N 18 արձանագրային որոշումը, ընդունվել է 2016 թվականի մայիսի 12-ին,
3. «Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 36 արձանագրային որոշումը, ընդունվել է 2016 թվականի սեպտեմբերի 15-ին,
4. «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 551-Ն որոշումը, ընդունվել է 2016 թվականի մայիսի 26-ին,
5. «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 631-Ն որոշումը, ընդունվել է 2016 թվականի հունիսի 2-ին,
6. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության N 831-Ն որոշումը, ընդունվել է 2016 թվականի օգոստոսի 11-ին,
7. ՈՀայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 831-Ն որոշումը, ընդունվել է 2016 թվականի սեպտեմբերի 8-ին N 957 –Ն որոշումը,
8. «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույց հաստատալու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունվարի 31-ի N 12-Ս/1 հրամանը,

9. «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ներկայացվող՝ երեխայի խնամքի տրամադրման մասին եզրակացության, երեխային բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություն ուղեգրելու մասին եզրակացության և բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատությունից երեխայի ծնողների (ծնողի) կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա երեխայի դուրսգրման մասին եզրակացության, բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունից երեխայի կենսաբանական ընտանիք վերադառնալու համար տրվող եզրակացության ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի սեպտեմբերի 1-ի N 121-ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 3-ի N 54-Ն հրամանը:

2016 թվականին շարունակվել են նաև ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես՝ կատարվել են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավման և սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովման, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացման, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավման աշխատանքներ:

Նախարարության համակարգում գործող՝ երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունում (մանկատներում) իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 660 երեխայի խնամքը, այդ թվում՝ շուրջ 450 երեխայի խնամքը՝ երեք հատուկ (մասնագիտացված) հաստատությունում: Թեև երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով պայմանավորված՝ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը հատուկ (մասնագիտացված) հաստատություններում:

Նախարարության համակարգի՝ երեխաների խնամքի և պաշտպանության 7 գիշերօթիկ հաստատությունում մինչև 2016 թվականի հուլիս ամիսը խնամվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 664 երեխա, որոնց խնամքը տարանջատվում է կրթությունից: Բարեփոխումներով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 11-ին N 831-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային **կազմակերպությունը** վերակազմակերպվել է երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնի, որտեղ տարվա ընթացքում ցերեկային խնամք և աջակցություն է տրամադրվել կազմակերպության սպասարկման տարածքի կյանքիմ դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին:

Տարեվերջին 6 հաստատությունում շուրջօրյա խնամք է ստացել 529 երեխա:

Նախարարության համակարգի՝ երեխաների սոցիալական հոգածության ցերեկային 4 կենտրոնները ծառայություններ են տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-18 տարեկան շուրջ 362 երեխայի և նրանց ընտանիքներին:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության՝ երեխաների 4 ցերեկային կենտրոնում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել դժվար իրավիճակում հայտնված առնվազն 250 երեխայի:

«Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան շուրջ 19 երեխայի տրամադրել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

Առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 23 երեխա խնամվել է խնամատար ընտանիքներում:

Հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) միջոցառման շրջանակում ՀՀ Լոռու և ՀՀ Շիրակի մարզերում, կենսաբանական ընտանիք է վերադարձել 40 երեխա, կանխարգելվել է 60 երեխայի մուտքը հաստատություններ: Միջոցառման շրջանակում ընտանիքներին տրամադրվել է բնակարանային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, կենտրոնիկ ծառայությունների փոխհատուցում:

«Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի շրջանակներում «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 18 տարեկան 5 շրջանավարտի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համաֆինանսավորմամբ 2016 թվականի ընթացքում «Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում» ծրագրի շրջանակում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի N 92 ներառական մանկապարտեզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում մտավոր և ֆիզիկական զարգացման ծանր խանգարումներ ունեցող մինչև 6 տարեկան միջինը 24 երեխայի մատուցվել է բազմամասնագիտական ծառայություններ:

Տարվել են նաև կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման, թրաֆիքինգի կանխարգելման և դրա գոհերին աջակցելու աշխատանքներ:

5. Ժողովրդագրություն

2016թ. կատարած աշխատանքները բխել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների դրույթներից՝ հաշվի առնելով անցած տարիներին հանրապետությունում արձանագրված ժողովրդագրական զարգացումները:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակը բնութագրող ցուցանիշները շարունակում են մնալ մտահոգիչ և խնդրահարույց: 2016թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ, տարեսկզբի համեմատ, հանրապետության մշտական բնակչությունը նվազել է 4.7 հազարով՝ կազմելով 2,993.9 հազար: 2016թ. առաջին 9 ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ժողովրդագրական զարգացման հիմնական ցուցանիշները դրսևորել են տարբեր միտումներ: Այսպես, նշված ժամանակահատվածում գրանցվել է 29914 ծնունդ (նվազում 699-ով), արձանագրվել է մահացության 20427 դեպք (նվազում 520-ով), ամուսնության 12088 դեպք (նվազում 1032-ով), ամուսնալուծության 2682 դեպք (նվազում 117-ով):

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը

հաստատելու մասին՝ ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որում ներառված միջոցառումները միտված են լինելու՝

- ծնունդների նյութական խրախուսմանը,
- մահացության, այդ թվում՝ մանկական և մայրական, կրճատմանը,
- բնակարանի կարիք ունեցող անձանց բնակարանով ապահովմանը՝ բնակարանով ապահովման պետական նպատակային ծրագրի (սոցիալական բնակարանային ֆոնդի) ներդրման և իրականացման միջոցով,
- տարիքային տարբեր խմբերին պատկանող մայրացած կանանց աջակցությանը,
- երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցության և զարգացման

այլընտրանքային մոտեցումների և տարբերակների ներդրմանը՝ ժողովրդագրական զարգացման ազգային հիմնադրամի ստեղծմամբ:

Պայմանավորված հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական փոփոխություններով, ինչպես նաև հաշվի առնելով ծնելիության ցածր մակարդակը՝ կարևորվել է բազմազավակ ընտանիքների սոցիալական երաշխիքների սահմանման անհրաժեշտությունը. ՀՀ կառավարության 2016թ. մարտի 10-ի N 245-Ս որոշման հավելվածի 21-րդ կետով ամրագրվել է «Բազմազավակ ընտանիքների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որը ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի 2017թ. հոկտեմբերին:

Ժողովրդագրական քաղաքականության համար գիտահետազոտական հենքի ապահովման նպատակով «Ժողովրդագրական քաղաքականության ազդեցությունների վերլուծություն և գնահատում» ծրագրի շրջանակներում, կատարվել է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագրին» ուսումնասիրությունը:

Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2017

Վիճակագրական-վերլուծական զեկույց

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐ՝

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
անդամ

ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

☎ (374 11) 523 927

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային
տնտեսությունների հետազոտությունների
բաժին

☎ (374 11) 524 326

Թողարկման պատասխանատու՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի վիճակագրական
տեղեկատվության տարածման և
հասարակայնության հետ կապերի բաժին

☎ (374 11) 523 356